ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Զանգեզուրի հայերի կենցաղի նկարագրության առաջին փորձը, այնքանով, որքանով տեղական սովորությունները կարող են ազդած լինել շրջանի տնտեսական կյանքի վրա, պատկանում է Ստեփան Զելինսկուն։ Նրան՝ ընդարձակ ծրագրով նախագծած այն հետազոտության մեջ, որը հատուկ մասնաժողովը ձեռնարկել էր Անդրկովկասի բոլոր գավառների արքունի գյուղացիների տնտեսական կացությունն ուսումնասիրելու համար, բաժին էր ընկել Զանգեզուրի գավառի հետազոտությունը։ Իր հավաքած հարուստ նյութերն ու դիտողությունները նա ամփոփել է մի ընդարձակ հոդվածի մեջ, որը զետեղված է մասնաժողովի հրատարակած ընդհանուր ժողովածուի առաջին հատորի մեջ՝ «Материалы по изучению экономического быта государственных крестьян Закавказского края», *ապա նույն՝ 1886 թ. լույս է ընծայվել առանձին գրքով, հետևյալ վերնագրով՝* «Исследование экономического быта государственных крестьян в Зангезурском уезде Елисаветпольской губернии».

Այդ աշխատության մեջ վերին աստիճանի արժեքավոր նյութեր են պարունակում «Население»— «Բնակչություն» *և մանավանդ* «Источники благосостояния крестьян»— «Գյուղացիների բարօրության աղբյուրները» *վերնագիրներ կրող 1-ին և 7-րդ գլուխները։ Վերջինիս մեջ հեղինակը բավականին հանգամանորեն նկարագրում է տեղացիների՝ թե՛ հայերի և թե՛ ադրբեջանցիների երկրագործական և անասնապահական պարապմունքները, կանգ է առնում մեղվաբուծության և տնայնագործության տեղական ձևերի վրա, աչքից բաց չթողնելով տեղում կատարված աշխատանքային պրոցեսների մանրամասնությունները։ Նման հետազոտություններով հիմնականում միևնույն ծրագրով ընդգրկվեցին Անդրկովկասի բոլոր գավառները։ Այդ պատասխանատու գործի իրացմանը ներգրավված էին բարձր գիտական նախապատրաստություն ունեցող մասնագետներ, մեծ մասամբ նարոդնիկական հոսանքին հարող երիտասարդներից։*

Աշխատանքը ղեկավարող մասնաժողովը գործում էր հողագործության մինիստրության Անդրկովկասյան լիազոր Ի. Տիխեևի անմիջական հսկողության ներքո։

Ավելի վաղ, 1881 թվին, մի այլ պետական հիմնարկ՝ Կովկասյան Ուսումնական շրջանի վարչությունը, սկսել էր Կովկասի բնակավայրերի և ցեղերի